

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-609-08.05.2020-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Հայաստանի Հանրապետության օրենքը «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին»				
Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «23-ին» թիվը փոխարինել «23-ի» թվով, իսկ օրենքի հերթական համարը նշել փակագծերից դուրս:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածից հանել «պետական կառավարչական հիմնարկ» և «համայնք» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը ձեւակերպել հետեւյալ կերպ. «Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>1. 3-րդ մասում «դրույքաչափը» բառից հետո լրացնել հետևյալ բառերը. (...)</p> <p>2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ(...):</p>		
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «տեսակի» բառից հետո լրացնել «ըստ վերջինով իրականացվող գործունեության բնույթի» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում «5-րդ մասում» բառերը փոխարինել «2-րդ մասի 5-րդ կետում» բառերով, իսկ «1.000.000» թիվը փոխարինել «300000» թվով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «1.Իրենց պարտականություններն իրականացնելու ժամանակ ավտոկայանատեղի վճարից ազատված են շտապ բժշկական օգնության ծառայությունը, ոստիկանությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը, պաշտպանության նախարարությունը և ազգային անվտանգության ծառայությունը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. « <i>Օրենքը լրացնել նոր՝ 16.1. հոդվածով.</i> «16.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի	Ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>առանձնահատկությունները»</p> <p>1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 16.2.-16.4.-րդ հոդվածներով:»:</p> <p>2. Անմիջականորեն իրականացվող հսկողության միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթն իրականացվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» սահմանված կարգով:</p> <p>2. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար վարչական պատասխանատվության միջոցի կիրառում նախատեսող վարչական ակտի հասցեատեր են համարվում ավտոտրասպորտային միջոցի ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ տվյալ ֆիզիկական անձը, իսկ ավտոտրասպորտային միջոցը իրավաբանական անձի, պետական (պետական մարմին, պետական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված է),՝ ապա այն անձը, որը իրավաբանական</p>		
--	--	--	--	--

		<p>անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնում խախտման կատարման պահին գրանցված է համապատասխանաբար տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար կամ աշխատակազմի ղեկավար (քարտուղար):</p> <p>4. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը որպես վարչական մարմին կիրառում է համայնքի ղեկավարը, իսկ Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:</p> <p>5. Եթե սույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները ուղղակիորեն չեն կարգավորվում սույն օրենքով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:»:</p>		
<p>ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p>	<p>Նախագծի 8-րդ հոդված</p>	<p>Նախագծի 8-րդ հոդվածից հանել «16.1.» թիվը և լրացնել «16.6.» թիվը:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդված ով լրացվող 16.2.-16.6.-րդ հոդվածների վերնագրերը դարձնել փոքրատառ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածում հանդիպող բոլոր «վճարը չկատարելու» բառերը փոխարինել «վճարը չվճարելու» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք				
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ բառերը փոխարինել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124 ⁷ -րդ հոդվածում՝ 1.վերնագրում և 1-ին պարբերությունում «տուրքը» բառը փոխարինել «վճարը» բառով: 2.լրացնել նոր պարբերությամբ՝ Ձեռնարկատիրական գործունեության նպատակով ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի կայանատեղիում կայանելու համար օրենքով	Ընդունվել է:	Ընդունվել է:

		սահմանված տեղական վճարը չվճարելը առաջացնում է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով:		
--	--	---	--	--